ՀԱԴՐՈՒԹԸ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ Է

Օրերս խմբագրություն էր եկել Հադրութի «Կոլտնտեսական» շրջանային թերթի խմբագիր Արթիկ Խաչատրյանը, որի հետ մեր թղթակցի հանդիպումից երկխոսությունը ներկայացնում ենք ընթերցողներին:

—Նախ, Հադրութից ինչպե՞ս եք հասել Ստեփանակերտ:

—Մարտունի-Տրախտիկ-Ծեխեր-Կարմիր շուկա-Շոշ և, վերջապես, Ստեփանակերտ գծով:

—Ուրեմն, հնարավո՞ր չէ Ֆիզուլիով Ստեփանակերտ գալ:

—Երկու օր առաջ քեռինս տար մեքենան Ֆիզուլիում քարկոծվել է: Շրջանը նրանից շրջափակված է: Հորադիզից հնարավոր չի անասունների համար հատկացված կերեր բերել, հեղուկ գազը պրոբլեմ է դարձել: Երկու օր առաջ տասը հոգուց բաղկացած զինվորական պահակախմբի ուղեկցությամբ մի մեքենա գազի բալոններ են բերել, խուճապ, բաժանել մանկապարտեզներին, հասարակական սննդի օբյեկտներին, այսպես ասած՝ փակ հիմնարկներին: Իսկ բնակչությունը մնացել է առանց գազի: Ի դեպ ասեմ, որ զինվորականների համար էլ անվտանգ չեն այդ երթուղիները:

—Իսկ ինչպե՞ս է վիճակը շրջանի ներսում, նկատի ունեմ ազգամիջյան հարաբերությունները:

—Վիճակը հարաբերական խաղաղ է: Կրկնում եմ՝ հարաբերական, որովհետև ներկային գերլարվածության այս շրջանում ամեն մի անզգույշ գործողություն առաջ է բերում այսպես ասած «դոմինոյի ռեակցիա»:

—Հուլիսի 24-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը եղել է Հադրութում: Պատմեցեք այդ մասին:

—Հանդիպումներ են տեղի ունեցել Հադրութում, Տողում և Մեծ Թաղլարում: Դժբախտաբար Տողում տեղի ադրբեջանցիները չցանկացան համատեղ հանդիպել հանձնաժողովի հետ: Ընդհանուր առմամբ հանդիպումները, իմ կարծիքով, անցել են լավ: Լավ առումով ես նկատի ունեմ գործնականությունը: Ելույթ ունեցողները ներկայացրել են Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի էությունը, շրջանում ստեղծված քաղաքական ծանր իրադրությունը, պահանջել, որ հարցը լուծվի վերջնական ձևով և շուտափույթ: Ինչպես ամբողջ մարզում, այնպես էլ մեր շրջանում գտնում են, որ միայն միացումը կարող է լուծել խնդիրը:

Ես ցանկանում եմ պատմել մի ռուս կնոջ՝ Լյուսյա Փարսյանի ելույթի մասին: 40 տարի առաջ հարս է եկել այս գյուղը, վեց երեխա ունի: Հայերը, որոնց մեջ ապրում եմ, ասել էր ռուս կինը, անչար, աշխատասեր մարդիկ են, հյուրասեր, բարի: Ամբողջ ռուս ազգի անունից խնդրում եմ լուծել արցախցիների պահանջը: Մեր Խորհրդային Միության մեջ մի ազգը չպիտի ճնշի մյուս ազգին, բայց այդպես քանի՜ տարի մեզ ճնշում են: Այսուհետև մենք ցանկանում ենք, որ մենք աշխատենք ու մենք էլ ուտենք: Ես վեց երեխա ունեմ, բայց ոչ մեկը իմ մոտ չէ: Ինչո՞ւ: Որովհետև գյուղում ապրելը դարձել է անհնարին: Գյուղի տակով գետ է հոսում, բայց ոչ խմելու և ոչ էլ ոռոգելու ջուր ունենք:

—Ներկայումս մարզում, երևի նաև Հադրութի շրջանում ամենադժվար լուծվող խնդիրը ավտոտրանսպորտությունն է:

—Մեզ մոտ դա ավելի սուր է զգացվում: Օրինակ, վերջերս Հայկ. ԽՍՀ-ից պետք է շրջանի համար խիստ կենսական նշանակություն ունեցող բեռներ բերեին: Ավտոշարասյունը Ջաբրայիլի շրջանից ետ է վերադարձվել Գորիս: Ջաբրայիլից Հադրութ ընդամենը 15 կմ ճանապարհ էր մնացել: Գորիսում մեկ ուրիշ շարասյուն կա: Արտաշատից: Սպասվող բեռները խիստ անհրաժեշտ են: Հատկապես այսօր: Եթե շարասյունը ժամանակին չհասնի տեղ, ծանր վիճակ է ստեղծվելու շրջանում: Մի օրինակ բերեմ: Երբ հարևան շրջաններում կազմակերպված միտինգների ժամանակ ադրբեջանական կողմից կոչեր արձակվեցին շրջանի բնակչության հասցեին, ի պատասխան, Հադրութում ստեղծվեցին ինքնապաշտպանական ջոկատներ: Այսպիսի առճակատումը վտանգավոր է:

—Ինչպե՞ս են ընթանում գյուղատնտեսական աշխատանքները:

—Դժվար, ծանր տարի է: Բայց պետք է ասել, որ խաղողի լավ բերք է սպասվում, առաջ են տարվում մյուս աշխատանքները: Դժվար վիճակ է ստեղծվում անասնապահության համար: Կերերը շատ սակավ են: Էդիլլուում հրդեհի ճարակ դարձավ տասը հեկ:

Մարդիկ աշխատում են ատամները սեղմած, սպասելով հարցի լուծմանը: Ես զարմանում եմ, երբ խոսում են հարցի լուծման յոթ տարբերակի մասին: Մենք դա չենք հասկանում:

—Ի՞նչ ուրախալի նորություն կարող եք հայտնել:

—Գուցե նորություն չէ, բայց ուրախալի երևույթ է: Արտաշատի ճանապարհաշինական վարչությունը սկսել է աշխատանքները Մարտունի-Ազոխ հատվածում, «Անդրգազգործի», վարչությունը՝ Հադրութ-Մարտունի հատվածի շինարարությունը: Պլանավորված է Հադրութ-Կարմիր շուկա ճանապարհը կառուցել առաջիկա տարիներին: Հետագայում այն կգնա մինչև Խծաբերդ: Այս տարի պետք է կատարվի 2,5 միլիոն ռուբլու աշխատանք: Հայաստանից բերվել է հզոր տեխնիկա, աշխատանքները իրականացնում են հմուտ մասնագետները: Տեղի երիտասարդները նույնպես սիրով լծվել են այդ աշխատանքներին:

Առայժմ, երբ դեռ անձրևներ չկան, Հադրութ-Կարմիր շուկա-Ստեփանակերտ երթուղին գործում է, հետո դա հնարավոր չի լինելու, ուստի խիստ անհրաժեշտ է ուժեղացնել այդ աշխատանքները:

Դժբախտաբար շրջկենտրոնի մի շարք ձեռնարկություններ չեն աշխատում, ընդհանրապես խախտված է աշխատանքային ռիթմը:

Այսօր ամենաառաջնահերթ խնդիրն է՝ կայունացնել իրադրությունը շրջանում ու նրա շուրջը, կյանքը դնել նորմալ հունի մեջ: